Ընդունելության պայմանները

Ասպիրանտուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ այն քաղաքացիները, ովքեր ստացել են մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում:

Նախկինում ասպիրանտուրան ավարտած կամ ասպիրանտուրայից անհարգելի պատճառով ազատված անձինք կրկին պետպատվերով ասպիրանտուրա ընդունվել չեն կարող:

Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմումը պետք է հասցեագրել ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանին:

Դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը
երկու օրինակից.

1. Բարձրագույն կրթության մասին դիպլոմի և նրա հավելվածի պատճենները (եթե դրանք դեռևս ստացված չեն, ապա՝ համապատասխան տեղեկանք բուհից),
2. կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
3. ինքնակենսագրություն,
4. 3 լուսանկար (3x4), որից երկուսը՝ փակցված անձնական թերթիկներին,
5. օտար լեզվի քննությունը և ինֆորմատիկայի ստուգարքը հանձնած լինելու վերաբերյալ համապատասխան տեղեկանքներ,
6. տեղեկանք թեկնածուական քննությունների հանձնման մասին /եթե դրանք հանձնված են/,
7. հրատարակված գիտական աշխատանքների, գյուտերի, հայտնա¬գործությունների և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունների բացակայության դեպքում՝ ռեֆերատ այն մասնագիտության գծով, որի համար ներկայացվում է դիմում (մագիստրատուրա ավարտածները կարող են ներկայացնել մագիստրոսական թեզը /մեկ օրինակ/),
8. երկու թղթապանակ (կապովի):

Անձնագրի, զինվորական գրքույկի, բարձրագույն կրթության մասին դիպլոմի բնօրինակները ներկայացնել անձամբ:

Ասպիրանտուրա ընդունվողը հանձնում է քննություն մասնագիտությունից, որի հանձնելու կարգի և ծրագրի մասին անհրաժեշտ է տեղեկանալ ՀՀ ԳԱԱ այն գիտական կազմակերպությունում, որի գծով տրված է հայտարարությունը:

Մասնագիտական առարկայի քննությունից «բավարար» գնահատական ստացած դիմորդները զրկվում են ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից:

Քննության վերահանձնում չի թույլատրվում:

Ընդունելության քննությունների արդյունքները դիմորդի ցանկությամբ կարող են ուժի մեջ մնալ նաև հաջորդ տարվա ընդունելության քննությունների համար:

Դիմորդը քննությանը ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով:

Օտար լեզուներից և ինֆորմատիկա առարկայից սահմանված են հետևյալ անցումային շեմերը՝

Անգլերեն TOEFL(iBT) - 54 միավոր (բնագիտական, տեխնիկական), 61 միավոր (հումանիտար-հասարակագիտական), 79 միավոր (հումանիտար-բանասիրական):

Ֆրանսերեն - 200 միավոր (բնագիտական, տեխնիկական), 300 միավոր (հումանիտար-հասարակագիտական), 400 միավոր (հումանիտարբանասիրական):
Գերմաներեն - 60 միավոր (բնագիտական,տեխնիկական), 80 միավոր (հումանիտար-հասարակագիտական), 100 միավոր (հումանիտար-բանասիրական):
Ինֆորմատիկա - 35 միավոր (բնագիտական, տեխնիկական), 25 միավոր (հումանիտար-հասարակագիտական), 20 միավոր (հումանիտար-բանասիրական):

Մրցույթի անցկացում

ա/ օտար լեզվի քննությունից և ինֆորմատիկայի ու համակարգչից օգտվելու հիմունքների տարբերակված ստուգարքից ստացած գնահատականները (գումարային ձևով),

բ/ հրատարակված գիտական աշխատանքների քանակը,

գ/ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ներդիրում գրանցված բոլոր գնահատականների միջինը,

դ/ մագիստրոսական ավարտական աշխատանքի պաշտպանության կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմային աշխատանքի գնահատականը,

ե/ միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

Օրինակ

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային
կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանին

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ թույլ տալ մասնակցելու (առկա, հեռակա,վճարովի) ասպիրանտուրայի ընդունելության քննությանը ----------
---------- մասնագիտության գծով

Ստորագրություն
Ամսաթիվ ամիս, տարի

Ուշադրություն
Դիմումներն ընդունվում են մինչև հունիսի 2-ը ներառյալ